Հավելված
ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2024թ. հոկտեմբերի 31-ի թիվ 111-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....2
2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ....3
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ....5
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ....6
5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ....8
6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ....10
7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ....19
8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....29

2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը» հաստատելու մասին թիվ 80-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:*

Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների ու տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Հակոբ Միհրանյանը:

[2] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:*

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում առկա տվյալները վերաբերում են տարբեր ժամանակահատվածներին, ներառյալ՝ խորհրդային տարիներին և ստացվում են տարբեր աղբյուրներից, դրանք ամբողջությամբ թվայնացված չեն ու դրանով պայմանավորված կենսաթոշակների նշանակման ռիսկ են պարունակում: Նաև Հաշվեքննիչ պալատի կողմից բարձրացված ռիսկերը հաշվի առնելով՝ Ծառայությունն իրականացրել է նշանակված կենսաթոշակների գործերի ուսումնասիրություններ և բացահայտել ոչ հավաստի փաստաթղթերի հիմքով նշանակված կենսաթոշակի դեպքեր:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված 9 անհամապատասխանություններից 4-ը վերացված են, իսկ 5-ի վերացման ուղղությամբ աշխատանքներն ընթացքում են:

Ներկայացված 5 առաջարկությունները նույնպես իրագործման ընթացքում են: Մանրամասները ներկայացված են Հաշվեքննիչ պալատի կողմից Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությունը պարունակող սույն փաստաթղթի «Հետհսկողական գործընթաց» 7-րդ բաժնում:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ[3]

Ծառայությունից հայցվել և ստացվել է ամբողջական տեղեկատվություն, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից, ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվեքննիչ պալատը սույն հաշվեքննության հիմնական արդյունքներն ամփոփող արձանագրությունը ներկայացրել է Ծառայությանը և ստացել արձանագրումների առնչությամբ նկատառումներ չունենալու վերաբերյալ Ծառայության արձագանքը:

Ծառայության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում կենսաթոշակների նշանակման կարգավորումների համաձայն անհրաժեշտ տվյալները վերաբերում են տարբեր ժամանակահատվածներին, ներառյալ՝ խորհրդային տարիներին և հավաքվում են տարբեր աղբյուրներից, թվայնացված չեն ու դրանով պայմանավորված կենսաթոշակների նշանակման ռիսկ են պարունակում: Մանրամասները ներկայացված են սույն փաստաթղթի «Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր» 6-րդ բաժնում:

Հաշվի առնելով նաև Հաշվեքննիչ պալատի կողմից վերը նշված ռիսկերը՝ Ծառայությունն իրականացրել է նշանակված կենսաթոշակների գործերի ուսումնասիրություններ և բացահայտել ոչ հավաստի փաստաթղթերի հիմքով նշանակված կենսաթոշակի դեպքեր[4]:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննության ժամանակահատվածին վերաբերելի խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ծառայության կողմից վերահսկվող՝ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով դրամական հոսքերի, ծախսերի և պարտավորությունների հաշվապահական հաշվառման գործընթացը կարգավորելու նպատակով՝ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունն իրականացնելու համար՝ Ծառայության կողմից սահմանվել է իրականացման ենթակա քայլերի

---

[3] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

[4] *Մանրամասները ներկայացված են «Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր» 6-րդ բաժնում:*

հաջորդականություն, պատասխանատու ստորաբաժանումներ և կատարման ժամանակացույց:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծառայության, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է շուրջ 303.7 մլրդ. դրամի ծախս, որն ավելացել է շուրջ 18.5 մլրդ. դրամով և ճշտված պլանը կազմել է շուրջ 322.2 մլրդ. դրամ, ֆինանսավորումը և փաստը (դրամարկղային ծախս)՝ շուրջ 291 մլրդ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ շուրջ 291.4 մլրդ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 90.31%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 - 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների ցուցանիշներ (հազ.դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		303,711,190.70	322,237,661.03	291,013,175.36	291,384,693.92
1005	Պարգևավճարներ և պատվովճարներ	5,939,800.00	5,939,800.00	5,545,989.56	5,545,845.56
1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	15,872,099.50	15,022,723.90	12,201,478.69	12,190,812.48
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	38,100.00	38,100.00	46,992.00
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	34,523,772.00	33,643,028.00	30,078,303.09	30,078,303.09
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	11,604,963.10	11,604,963.10	10,903,727.86	10,903,727.86
1088	Զբաղվածության ծրագիր	222,742.20	801,130.90	411,627.01	411,627.01
1098	Բնակարանային ապահովում	2,157,500.00	2,407,500.00	2,268,484.84	2,268,484.84
1102	Կենսաթոշակային ապահովություն	181,009,900.00	180,909,900.00	169,009,998.86	169,028,341.36
1117	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	3,064,428.60	3,067,657.63	3,044,202.34	3,399,403.27
1141	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	-	73,936.70	27,569.52	27,569.52
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	100.00	75,624.40	-	-
1168	Արվեստների ծրագիր	16,485.00	16,485.00	14,514.56	14,514.56
1184	Ավանդների և այլ փոխհատուցումներ	757,500.00	757,500.00	572,742.87	573,439.63

Ծրագիր		Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1205	Սոցիալական ապահովություն	33,541,900.30	34,008,861.40	30,089,205.66	30,088,402.24
1225	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	15,000,000.00	33,870,450.00	26,807,230.50	26,807,230.50

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է ուսումնասիրություն Ծառայությանը վերապահված կանոնադրական գործառույթների իրականացման շրջանակներում հիմնական մասնագիտական և աջակցող ստորաբաժանումների ծավալած գործունեության և արձանագրած արդյունքների վերաբերյալ: Ստորև ներկայացվում են ուսումնասիրության արդյունքները.

1. 1102-12003 «Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառում

«Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառման շրջանակներում 2024 թվականի վեց ամիսների ընթացքում Ծառայության կողմից ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 155,558,000.0 հազ. դրամի ծախս, դրամարկղային ծախսը կազմել է 144,132,000.0 հազ. դրամ (92.65%): Միջոցառման տեսակարար կշիռը Ծառայության ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 49.52%:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

Օրենքի 32-րդ հոդվածով սահմանված է, որ

- Մաս 1՝ մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ:
- Մաս 1.1՝ 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ և սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը:
- Մաս 2՝ 2013 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաստատվում է սույն օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների[5] հիման վրա:

Գործնականում հաճախ են դեպքերը, երբ քաղաքացիները աշխատանքային գրքույկներ չեն ներկայացնում, այլ փոխարենը, կենսաթոշակ նշանակելու մասին դիմումին կից ներկայացնում են հայտարարություն՝ աշխատանքային

---

[5] *Օգտագործվում են անձնավորված թվային տվյալներ «Պառնաս» և ՊԵԿ-ի կողմից վարվող տեղեկատվական շտեմարաններից:*

գործունեության տարբեր ժամանակահատվածների վերաբերյալ: Բացի այդ՝ առկա են դեպքեր, երբ աշխատանքային գրքույկները լրացված են ոչ պատշաճ՝ գրքույկները վարելու կարգի բացթողումներով: Տվյալ դեպքում Ծառայությունը, կատարում է հարցումներ պետական արխիվից և աշխատանքային գրքույկի գրառումները համադրվում են արխիվային տեղեկանքի տվյալների հետ:

Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման թիվ 1 հավելվածի 12.1. կետի համաձայն՝ Ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, Ծառայության կանոնադրության[6] 11-րդ կետի 46-րդ ենթակետի համաձայն, ըստ անհրաժեշտության, կարող է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը ստուգել նաև կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու կամ կենսաթոշակի տեսակը փոխելու որոշումն ընդունելուց հետո՝ շահառուների աշխատանքային ստաժը հիմնավորող փաստաթղթեր տրամադրած մարմիններին և կազմակերպություններին հարցումներ կատարելու կամ հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են ապահովադիրների կողմից կատարված սոցիալական վճարների վերաբերյալ՝ Ծառայությանը հասանելի հետևյալ տվյալները, մասնավորապես.

- 1998-2004թթ. ժամանակահատվածի մասով առկա է ոչ ամբողջական տեղեկատվություն, որը հավաստիության ռիսկ է պարունակում.
    - առկա են տվյալներ ոչ բոլոր ապահովադիրների վերաբերյալ. տեղեկատվությունն առկա է միայն այն ապահովադիրների մասով, ովքեր նշված ժամանակահատվածում հաշվառվել են Ծառայության իրավանախորդ հանդիսացած Պետական կենսաթոշակային հիմնադրամի համապատասխան ստորաբաժանումներում,
    - առկա տվյալներն ընդհանրական են,
    - անձնավորված հաշվառում չի իրականացվել,
    - առկա տվյալները ներկայացված են տեսաներածված (սքանավորված) տարբերակով և թվայնացված չեն:
- 2004թ.-ից մինչև 2013թ. ժամանակահատվածի մասով կիրառվում է «Պառնաս» տեղեկատվական շտեմարանը, որտեղ առկա է ոչ ամբողջական տեղեկատվություն.
    - տվյալներն անհատական են և անձնավորված,
    - տվյալներն ամբողջական չեն. բացակայում են տվյալներն այն ապահովադիրների մասով, որոնք Ծառայության իրավանախորդ հանդիսացած Պետական կենսաթոշակային հիմնադրամի համապատասխան ստորաբաժանումներում չեն հաշվառվել,

---

[6] *Հաստատված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 37-Լ հրամանով:*

- առկա տվյալները ներկայացված են տեսաներածված (սքանավորված) տարբերակով և թվայնացված չեն:

Փաստացի՝ Ծառայության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում կենսաթոշակների նշանակման կարգավորումների համաձայն անհրաժեշտ տվյալները վերաբերում են տարբեր ժամանակահատվածներին, ներառյալ՝ խորհրդային տարիներին և հավաքվում են տարբեր աղբյուրներից, թվայնացված չեն ու դրանով պայմանավորված կենսաթոշակների նշանակման ռիսկ են պարունակում: Մասնավորապես.

- մինչև 2004թ. ժամանակահատվածին վերաբերելի տվյալներն ահնատականացված չեն,
- տվյալների թվայնացված չլինելու հանգամանքով պայմանավորված չի կարող կիրառվել թվային մշակման գործիքակազմ,
- չեն կարող օգտագործվել ինքնաշխատ համակարգեր և առկա է մարդկային գործոնով պայմանավորված սխալվելու առարկայական ռիսկ,
- «Թվայնացման» աշխատանքների արդյունքում տեսաներածվել (սքանավորվել) են աշխատանքային գրքույկները, որոնք փաստացի մեքենայական ընթեռնելի (machine readable) չեն, հետևաբար շահառուների աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները չեն կարող մշակվել թվային գործիքակազմի միջոցով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի թիվ 882-Ն որոշման շրջանակներում Ծառայության կողմից իրականացվել են աշխատանքային գրքույկների «թվայնացման» աշխատանքներ, որոնց արդյունքում տեսաներածվել (սքանավորվել) են գործատուների կողմից ներկայացված աշխատանքային գրքույկները, որոնք շահառուի տվյալների (ՀԾՀ, անձնագիր) և գրքույկի համարի միջոցով հնարավոր է նույնականացնել և կցել կենսաթոշակառուի գործին: Նշված աշխատանքային գրքույկները միայն տեսաներածված են, այլ ոչ՝ թվայնացված (machine readable), ուստի անձանց աշխատանքային գործունեության վերաբերյալ անձնավորված տվյալները չեն կարող մշակվել և կիրառվել թվային գործիքակազմի միջոցով, մասնավորապես.

- Մեքենայական ոչ ընթեռնելի (non machine readable) սկանավորումները պահանջում են ձեռքով տվյալների մուտքագրում, ինչը ժամանակատար է և պարունակում է սխալվելու ռիսկեր:
- Սկանավորված տարբերակները չեն կարող ինդեքսավորվել և չեն տալիս որոնման հնարավորություն, ինչը դժվարացնում է տեղեկատվության արագ որոնումը:

- Տվյալների վերլուծության կամ հաշվետվությունների կազմման համար համապատասխան տեղեկատվության օգտագործումն առանց մեքենայական ընթեռնելի տվյալների հնարավոր չէ:

Հաշվեքննության շրջանակներում կատարված պետական կենսաթոշակային համակարգի շտեմարանում (այսուհետ՝ Շտեմարան) առկա տվյալների ուսումնասիրությունների համաձայն՝ ԽՍՀՄ տարածքում աշխատանքային գործունեություն ծավալած և 1992-2013թթ. ընկած ժամանակահատվածում աշխատած շահառուների կողմից աշխատանքային ստաժի վերաբերյալ ներկայացված տվյալները հավաստիության ռիսկ են պարունակում:

Նմանատիպ ռիսկ առկա է նաև Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ տարիքային կենսաթոշակ նշանակելու դեպքում, քանի որ սույն դեպքում անձին անհրաժեշտ է առնվազն 35 տարվա աշխատանքային ստաժ և չաշխատելու պայման:

Հաշվեքննության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և Ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով կենսաթոշակ նշանակված 10 օրացուցային տարվա ստաժներ ունենալու հիմքով շահառուների թիվը կազմում է շուրջ 33,000: Ծառայության կողմից 2024 թվականի առաջին կիսամյակում վերը նշված ռիսկային խմբի հետ կապված գործերի ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Փաստացի, անձին կենսաթոշակ նշանակելուց հետո կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվում են ոչ հավաստի փաստաթղթերի հիմքով նշանակված կենսաթոշակի դեպքեր: Հաշվեքննիչ պալատի կողմից բարձրացված ռիսկերը գնահատելու և դրանցով պայմանավորված՝ կենսաթոշակի ավել վճարման դեպքերը բացառելու նպատակով, Ծառայության կողմից իրականացվում են պետական կենսաթոշակային համակարգում առկա գործերի ուսումնասիրություններ[7]: Ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ «Բազալտ» ՓԲ ընկերությունում, ինչի արդյունքում բացահայտվել են 55 կենսաթոշակառուների՝ չհիմնավորված փաստաթղթերով ընդհանուր շուրջ 360 տարի հաշվառված ոչ իրավաչափ աշխատանքային ստաժներ: Արդյունքում ավել է վճարվել 11,102.74 հազ. դրամ գումար, որից 2,767.72 հազ. դրամը արտադատական կարգով վերականգնվել է, իսկ

[7] *Հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 37-Լ հրամանով հաստատված՝ Միասնական սոցիալական ծառայության Կանոնադրության 11-րդ կետի 46-րդ ենթակետ:*

մնացած 8,335.02 հազ. դրամը՝ Ծառայության կողմից նախատեսվել է վերականգնել դատական կարգով:

2. Տեղեկատվական շտեմարանների տվյալների համադրումների վերաբերյալ արձանագրում

2.1. Պետական կենսաթոշակային համակարգի և հասանելի այլ շտեմարաններում առկա տվյալների համադրում

Ծառայության կողմից 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող և հերթական ամսում ցուցակավորման ենթակա կենսաթոշակի գործերում առկա կենսաթոշակառուների տվյալների (ներառյալ ՀՀ ուժային կառույցների կենսաթոշակառուների) և Բնակչության պետական ռեգիստրի (այսուհետ՝ ԲՊՌ) կողմից Ծառայությանը տրամադրվող տվյալների շտեմարանի տեղեկատվության համադրման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

- ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու հիմքով դադարեցվել է 10 շահառուների կենսաթոշակ ստանալու իրավունքը (Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ), ինչպես նաև՝ բացահայտվել է ոչ իրավաչափ վճարված 554.3 հազ. դրամ կենսաթոշակի գումար, որից 356.0 հազ. դրամը վերականգնվել է:
- ՀՀ բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու հիմքով դադարեցվել է 69 երկքաղաքացի հանդիսացող շահառուների կենսաթոշակ (նպաստ) ստանալու իրավունքը (Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ), որոնցից վերականգնվել է 21 շահառուների կենսաթոշակ (նպաստ) ստանալու իրավունքը, իսկ բացահայտված ոչ իրավաչափ վճարված 108.0 հազ. դրամից վերականգնվել է 36.0 հազ. դրամը:
- Կացության քարտի վավերականության ժամկետը լրանալու հիմքով դադարեցվել է 25 շահառուների կենսաթոշակ (նպաստ) ստանալու իրավունքը, որից վերականգնվել է 16 շահառուների կենսաթոշակ (նպաստ) ստանալու իրավունքը:
- Կատարվել են նաև 711 կենսաթոշակի (նպաստի) գործերի ուսումնասիրություններ, որի արդյունքում ճշգրտվել են շահառուների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, ճամփորդական փաստաթղթերի վավերականության ժամկետները:
- Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական «ՍԷԿՏ» համակարգից ստացվող տեղեկատվության և կենսաթոշակների վճարման ցուցակների համադրման արդյունքներով դադարեցվել են անկանխիկ եղանակով վճարվող 114 շահառուների կենսաթոշակների (նպաստների) վճարումները, որոնցից 48 շահառուների կենսաթոշակների (նպաստների) վճարումները վերսկսվել են: Միաժամանակ արձանագրվել է ոչ իրավաչափ

վճարված կենսաթոշակի (նպաստի) 969.0 հազ. դրամ գումար, որից 561.5 հազ. դրամը վերականգնվել է:

- Ծառայության գանձապետական հաշվին են վերադարձվել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից կանխիկ եղանակով 18 շահառուներին ոչ իրավաչափ վճարված 3,638.7 հազ. դրամից 495.1 հազ. դրամ գումարը:

2.2. Կրկնակի կենսաթոշակի նշանակման դեպքերի վերաբերյալ արձանագրում

Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական պայմանագիր կնքած պետություններում կրկնակի կենսաթոշակ նշանակելու դեպքերը բացահայտելու նպատակով 2024 թվականի առաջին կիսամյակում Ծառայության կողմից Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի սոցիալական ծառայության մարմիններին են հասցեագրվել շուրջ 1,200 հարցումներ և ստացված շուրջ 800 պատասխաններից բացահայտվել են կենսաթոշակ ստացող 78 շահառուներ, ովքեր կենսաթոշակ են ստանում նաև նշված պետություններից, ինչի արդյունքում արձանագրվել է ոչ իրավաչափ կամ սխալ վճարված 88,800.0 հազ. դրամ կենսաթոշակի գումար:

Վերոնշյալ ռիսկերը նվազեցնելու համար, հարցումներն առցանց եղանակով իրականացնելու նպատակով՝ ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում մշակվել և ԷԿԵՆԳ համակարգի միջոցով ներդրվել է գործիքակազմ, որը դեռևս գտնվում է թեստավորման փուլում: Նշվածի նպատակը կայանում է նրանում, որ գործիքակազմը գործարկվելուց հետո հարցումները և դրանց պատասխանները կստացվեն սեղմ ժամկետներում, ինչը կնպաստի նաև շահառուների կենսաթոշակ ստանալու իրավունքի իրացման անխոչնդոտ իրականացմանը:

3. Ավել վճարված կենսաթոշակի և նպաստի գործերի վերաբերյալ արձանագրում

Ուսումնասիրությունների ընթացքում սխալ նշանակված կամ վճարված կենսաթոշակի և նպաստի գործերով շահառուների կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված է Օրենքի 41-րդ հոդվածի դրույթների կիրառմամբ: Ծառայության կողմից ձեռնարկվում են միջոցներ ավել վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ դատարաններ են ներկայացվել թվով 75 հայցադիմումներ՝ ընդհանուր 29,603.1 հազ. դրամ գումարի բռնագանձման հայցագնով, որից.

- 27 գործերով հայցերը բավարարվել են՝ 13,110.1 հազ. դրամ գումարի չափով,
- 30 հայցադիմումներ վերադարձվել են՝ 11,334.9 հազ. դրամ գումարի չափով,

- 17 գործեր գտնվում են քննության փուլում՝ 5,131.7 հազ. դրամ գումարի չափով,
- 1 հայց մերժվել է՝ 26.3 հազ. դրամ գումարի չափով:

Նշված հայցադիմումները ՀՀ դատարաններ ներկայացնելու համար վճարվել է 1,097.8 հազ. դրամ պետական տուրքի գումար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 2023 թվականի դեկտեմբերին կատարված փոփոխության հիմքով՝ 2024 թվականի փետրվարի 1-ից ՀՀ դատարաններում նոր մուտքագրվող քաղաքացիական գործերն ամբողջությամբ վարվում են էլեկտրոնային եղանակով՝ «https://cabinet.armlex.am» ինտերնետային կայքի հասցեով գործարկված էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Համակարգում առկա տեխնիկական խնդիրներով պայմանավորված, հայցադիմումները վերադարձվում և կրկին են ներկայացվում, սակայն դատարանների կողմից վարույթ չի ընդունվում: Վերադարձի որոշման հիմքում դրված է այն պատճառաբանությունը, որ էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի վճարումը պետք է կատարված լինի ոչ թե «Client treasury» համակարգի միջոցով, այլ՝ Համակարգի, ինչը առկա գործիքակազմով հնարավոր չէ իրականացնել:

4. Դեբիտորական պարտքերի վերաբերյալ արձանագրում

Պետական կառավարման և այլ մարմիններից ինքնաշխատ եղանակով ստացված տվյալների և Ծառայության կողմից օգտագործվող՝ շահառուների վերաբերյալ շտեմարանի տվյալների հետ համադրման արդյունքում բացահայտվում են սխալ կամ ոչ իրավաչափ վճարվող կենսաթոշակի (նպաստների) գործեր: Նշվածի արդյունքում հայտնաբերված ավել վճարված գումարները հաշվառվում են որպես դեբիտորական պարտքեր:

01.01.2024թ. դրությամբ կենսաթոշակների և այլ սոցիալական ծրագրերի գծով դեբիտորական պարտքը կազմել է 146,590.5 հազ. դրամ: 1-ին կիսամյակում արձանագրվել է ևս 77,704.3 հազ. դրամ ոչ իրավաչափ վճարում, որից մարվել է 40,337.0 հազ. դրամը: Դեբիտորական պարտքի մնացորդը 30.06.2024թ. դրությամբ կազմել է 183,957.8 հազ. դրամ: Ըստ ծրագրերի և միջոցառումների դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկություններն արտացոլված են ստորև (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2 - Դեբիտորական պարտքերի վերաբերյալ

հազ.դրամ

Միջոցառում, ծրագիր	Դեբիտորական պարտքեր			
	մնացորդ 01.01.2024թ.	1-ին կիսամյակում		մնացորդ 30.06.2024թ.
		ձևակերպված	մարված	
1011-12001 Ընտանիքի կենսամակ. ուղղված նպաստներ	3,342.5	53,848.1	40,337.0	16,853.6
1205-12001 Սոցիալական նպաստներ	12,532.75	803.42	0.0	13,336.17
1068-12002 Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	2,889.68	0.0	0.0	2,889.68
1102-12003 Աշխատանքային կ/թ	109,048.94	22,394.13	0.0	131,443.07
1088-12013 Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում	12,548.97	0.0	0.0	12,548.97
1102-12001 Սպայական կ/թ	3,558.91	5.67	0.0	3,564.58
1005-12001 Պարգևավճարներ	796.64	144.0	0.0	940.64
1068-12001 Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	1,847.65	0.0	0.0	1,847.65
1082-12002 Մայրության նպաստ	24.50	0.0	0.0	24.5
1102-12004 ՀՀ օրենքն. նշան. կ/թ	0.0	508.97	0.0	508.97
Ընդամենը	**146,590.54**	**77,704.29**	**40,337.0**	**183,957.83**

Անհուսալի ճանաչված և դուրս գրված դեբիտորական պարտքեր 2024թ. 1-ին կիսամյակում առկա չեն:

5. Ծառայության կողմից շահագործվող էլեկտրոնային համակարգեր

Ծառայության կողմից կենսաթոշակների և նպաստների վերաբերյալ տվյալների հաշվառման գործընթացներն իրականացվում են հետևյալ էլեկտրոնային համակարգերով.

- «Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական» համակարգ,
- «ԼՂՀ կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական» համակարգ,
- «Աշխատանքային գրքույկներ» համակարգ,
- ՄՍԾ տեղեկատվական ներքին պորտալ,
- Ընտանիքների անապահովության գնահատման համակարգ «Նպաստ» ծրագիր,
- ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» տեղեկատվական համակարգ,
- Ֆունկցիոնալության գնահատման «e-disability.am» համակարգ,
- Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական համակարգ,

- Աջակցող միջոցների տրամադրման համակարգ:

Հաշվեքննիչ պալատի կողմից նշված էլեկտրոնային համակարգերը հաշվեքննության չեն ենթարկվել:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված 9 անհամապատասխանություններից 5-ը դեռևս վերացված չեն, իսկ ներկայացված 5 առաջարկությունները գտնվում են կատարման ընթացքում[8]:

Ծառայության կողմից վերահսկվող՝ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով դրամական հոսքերի, ծախսերի և պարտավորությունների հաշվապահական հաշվառման գործընթացը կարգավորելու նպատակով՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման» հաշվեքննության արդյունքների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության[9] 7-րդ բաժնի ա) կետի 5-րդ ենթակետով ներկայացված առաջարկությունն իրականացնելու համար՝ Ծառայության կողմից սահմանվել է իրականացման ենթակա քայլերի հաջորդականություն, պատասխանատու ստորաբաժանումներ և կատարման ժամանակացույց:

Հաշվեքննիչ պալատի կողմից Ծառայությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում արձանագրված անհամապատասխանությունների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվության տրամադրման ձևաչափ

ա) Տեղեկատվություն նախորդ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերբերյալ.

h/h	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
1	Միջոցներ ձեռնարկել կենսաթոշակի իրավունք ունեցող անձի աշխատանքային ստաժի մասին տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով ճշտելու հետ կապված իրավակարգավորումները և դրանց	Ընդունելի է	Ընթացքում է	Ծառայությունը խնդրո առարկա հարցը կանոնակարգելու նպատակով սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին՝ Նախարարությանը՝ սահմանված կարգով շրջանառելու նպատակով ներկայացրել է ՀՀ կառավարության 2012 թվականի

[8] *Ծառայության կողմից ներկայացված արձագանքի համաձայն՝ մատնանշված թվով 5 չվերացված անհամապատասխանություններն ու դրանց վերացմանն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումները գտնվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործառույթների տիրույթում:*

[9] *Հրապարակված է Հաշվեքննիչ պալատի կայքի «Փաստաթղթեր» բաժնի «Ընթացիկ եզրակացություններ» ենթաբաժնում:*

h/h	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	կիրառման գործելակերպը ներդաշնակեցնելու ուղղությամբ:			օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Նախարարությունը 11.06.2024թ. N ԴԽ/ԱԳ-1-3/18876-2024 գրությամբ տեղեկացրել է, որ Ծառայության կողմից ներկայացված նախագծերով նախատեսվող կարգավորումները կքննարկվեն առաջիկայում նախարարության կողմից նախաձեռնվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:
2	Միջոցներ ձեռնարկել բանկերի հետ գործող «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրերի շրջանակում ՀՀ պետական բյուջե վերադրաձման ենթակա միջոցների՝ սահմանված ժամկետները չպահպանելու ռիսկերը կառավարելու ուղղությամբ:	Ընդունելի է	Ընթացքում է	Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի (պարբերական դրամական վճարների մասին) պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 284-ն որոշմամբ, ուստի Ծառայությունը Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը ներկայացրել է Նախարարությանը՝ Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և առաջարկության հաշվառմամբ սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության և/կամ նպատակահարմարության հարցի վերաբերյալ սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի դիրքորոշումը պարզելու նպատակով:
3	Նախաձեռնել փոփոխություններ ՀՀ կառավարության 12.03.202թ N 284-Ն և N 287-Ն որոշումներում՝ նախատեսելով «ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա ՀՀ օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված պարբերական դրամական վճարների գումարների և շահառուների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկերին» Ձև N 3–ը և «ՀՀ օրենսդրության խախտմամբ վճարված և հաշվետու ամսում ՀՀ	Ընդունելի է	Ընթացքում է	Ծառայության կողմից համապատասխան գրություն է ուղվել ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով սահմանված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերին միացած բանկերին՝ նշված պայմանագրերով սահմանված պարտականությունները նախատեսված ժամկետում կատարելու և շահառուների բանկային հաշիվներում առկա միջոցները պահանջի հիման վրա պետական բյուջե հետգանձելու ժամկետների ուշացման դեպքերը բացառելու վերաբերյալ:

h/h	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական վճարների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկին» Ձև N 4-ը բանկերին ներկայացնել շահառուներին ՀՀ օրենսդրության խախտմամբ (սխալ) կատարված վճարումների հանգամանքը ի հայտ գալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:			Ծառայության կողմից համապատասխան գրություն է ներկայացվել Նախարարությանը՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով համապատասխանաբար հաստատված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերի օրինակելի ձևերում բանկերի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացմամբ կատարման դեպքերի համար պատասխանատվության միջոցներ սահմանելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու հնարավորության հարցը դիտարկելու նպատակով: Նախարարությունը նպատակահարմար չի համարել տվյալ պահին ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես գալ, իսկ խնդրո առարկա հարցով դիմել է Կենտրոնական բանկ և Հայաստանի բանկերի միություն: Կենտրոնական բանկը 09.01.2024թ. N 13.1.1-07/016-24 գրությամբ հայտնել է, որ բարձրացրած խնդիրները ներկայացվել են ՀՀ գործող բանկերին՝ խնդիրների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու առաջարկությամբ:
4	Մշակել գործիքակազմ բանկի պատասխանատվության ժամանակահատվածում՝ լիազոր մարմնից «ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա ՀՀ օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված պարբերական դրամական վճարների գումարների և շահառուների տվյալների, որոնք լիազոր մարմինը տրամադրում է բանկերին» Ձև N 3–ով և «ՀՀ օրենսդրության խախտմամբ վճարված և հաշվետու ամսում ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա միանվագ դրամական վճարների տվյալների, որոնք լիազոր	Ընդունելի է	Ընթացքում է	Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի (պարբերական դրամական վճարների մասին) պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 284-ն որոշմամբ, ուստի Ծառայությունը Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը ներկայացրել է Նախարարությանը՝ Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և առաջարկության հաշվառմամբ սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան փոփոխություններ

հ/հ	Առաջարկություն	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
	մարմինը տրամադրում է բանկին» Ձև N 4–ով կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում և դրանից հետո հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից գումարների դուրսգրվելը վերահսկելու համար:			կատարելու անհրաժեշտության և/կամ նպատակահարմարության հարցի վերաբերյալ սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի դիրքորոշումը պարզելու նպատակով:
5	Ապահովել՝ Միասնական սոցիալական ծառայության կողմից վերահսկվող՝ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով դրամական հոսքերի, ծախսերի և պարտավորությունների հաշվապահական հաշվառումը ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան:	Ընդունելի է	Ընթացքում է	Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա Ծառայության կողմից իրականացվել են եզրակացությամբ արձանագրված և չհաշվառված դեբիտորական պարտքերի՝ սահմանված կարգով հաշվառումը: Միաժամանակ, հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը, Ծառայությունում ձեռնարկվում են համապատասխան միջոցներ դեբիտորական պարտքերի հայտնաբերման և հաշվառման մեթոդաբանությունը վերանայելու ուղղությամբ:

բ) Տեղեկատվություն նախորդ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացման վերաբերյալ

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
1	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Լիազորված պետական մարմին ճանաչելու, սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» N 284-Ն որոշմամբ սահմանված «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրի հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ՀՀ պետական բյուջե հետգանձման սահմանված ժամկետի և բանկերի կողմից շահառուների բանկային հաշվից պետական բյուջե գումարների վճարման ժամկետների միջև:	Ընթացքում է	Բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերը հաստատված են համապատասխանաբար ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով, ուստի բանկերի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացմամբ կատարման դեպքերի համար պատասխանատվության միջոցներ սահմանելու նպատակով ՀՀ կառավարության որոշումներում համապատասխան փոփոխություններ կատարելու գործառույթը դուրս է Ծառայության իրավասությունների շրջանակից: Միաժամանակ, հաշվեքննիչ պալատի առաջարկության հիման վրա Ծառայությունն իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ, մասնավորապես. Ծառայության կողմից համապատասխան գրություն է ուղվել ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով սահմանված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրերին միացած բանկերին՝ նշված պայմանագրերով սահմանված պարտականությունները նախատեսված ժամկետում կատարելու և շահառուների բանկային հաշիվներում առկա միջոցները պահանջի հիման վրա պետական բյուջե հետգանձելու ժամկետների ուշացման դեպքերը բացառելու վերաբերյալ: Ծառայության կողմից համապատասխան գրություն է ներկայացվել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն), որպես սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և N 287-Ն որոշումներով համապատասխանաբար հաստատված սոցիալական ապահովության հաշվի և միանվագ դրամական վճարների հաշվի

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
			պայմանագրերի օրինակելի ձևերում բանկերի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կամ ուշացմամբ կատարման դեպքերի համար պատասխանատվության միջոցներ սահմանելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու հնարավորության հարցը դիտարկելու նպատակով: Նախարարությունը, սակայն, նպատակահարմար չի համարել տվյալ պահին վերը նշված որոշումներում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես գալ, իսկ խնդրո առարկա հարցով դիմել է Կենտրոնական բանկ և Հայաստանի բանկերի միություն: Կենտրոնական բանկը 09.01.2024թ. N 13.1.1-07/016-24 գրությամբ հայտնել է, որ բարձրացրած խնդիրները ներկայացվել են ՀՀ գործող բանկերին՝ խնդիրների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու առաջարկությամբ:
2	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը հաստատելու մասին» N 1081-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի և Հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետի ա) և բ) պարբերությունների պահանջների հետ:	Ընթացքում է	ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին հանձնարարված է մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը միջոցներ ձեռնարկել՝ 1992-2004թթ. գործատուների կատարած պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու և այդ ժամանակահատվածում վարձու աշխատողի համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարած լինելու մասին տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով ճշտելն ապահովող ծրագրային ապահովում ստեղծելու համար: Մինչև օրս Ծառայությունում նշված գործառույթն իրականացվել է մասնակի ինքնաշխատ ձևով: Որոշմամբ սահմանված ժամկետում ծրագրային գործիքը չի ներդրվել, իսկ տվյալ պահին այն ժամանակավրեպ է, քանի որ սահմանված ժամկետից անցել է ավելի, քան 10 տարի, իսկ նման ինքնաշխատ ծրագրային ապահովման անհրաժեշտությունն այլևս բացակայում է, քանի որ Ծառայության

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
			կողմից որոշակի՝ բավարար, չափով ապահովված է անհրաժեշտ տեղեկատվության ստացումը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը՝ Ծառայությունը հարցը կանոնակարգելու նպատակով Նախարարությանը՝ սահմանված կարգով շրջանառելու նպատակով ներկայացրել է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Նախարարությունը 2024 թվականի հունիսի 11-ի ԴԽ/ԱԳ-1-3/18876-2024 գրությամբ տեղեկացրել է, որ Ծառայության կողմից ներկայացված նախագծերով նախատեսվող կարգավորումները կքննարկվեն առաջիկայում նախարարության կողմից նախաձեռնվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:
3	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռնող համակարգչային ծրագրերի՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը և դրանց ավտոմատացված համակարգերի նկատմամբ պահանջները սահմանելու մասին» թիվ 313-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի 2-րդ ենթակետի և 5-րդ կետերի պահանջների հետ:	Ընթացքում է	Ծառայության կողմից կենսաթոշակների և նպաստների մասով ֆինանսավորումը կատարվում է ոչ թե անհատական՝ ըստ շահառուների, այլ՝ վճարող կազմակերպություններին՝ բանկերին և փոստին՝ համապատասխան վճարման ցուցակի հիման վրա հաշվարկված հանրագումարին համապատասխան (մեկ թվով): Սակայն, հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի դիտարկումները, առաջիկայում Ծառայության կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ շահառուներին վճարվող կենսաթոշակների և նպաստների մասով ևս անհատական (ըստ շահառուների) հաշվառում վարելու և համապատասխան ծրագրային ապահովում ներդնելու (կամ «ՀԾ-Ձեռնարկություն» ավտոմատացված հաշվապահական հաշվառման համակարգի լրացուցիչ գործիքակազմի, կամ էլ՝ նոր ծրագրային ապահովման միջոցով) հնարավորության հարցը պարզելու նպատակով:
4	ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների	Ընթացքում է	Ծառայության կողմից խնդրո առարկա ընթացակարգը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	շտեմարանը վարելու կարգը հաստատելու մասին» որոշման 1-ին կետով հաստատվել է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը: Համաձայն նույն որոշման Հավելվածի. • 10-րդ կետի՝ կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը դիմումի, վարչական ակտի հիման վրա և ինքնաշխատ եղանակով շտեմարանում ներառելու ընթացակարգը պետք է սահմաներ Ծառայությունը: Սակայն առ ընթացիկ եզրակացությունը կազմելու օրը Ծառայության կողմից նշված ընթացակարգը չի սահմանվել: • 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետի դիմումի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվելու դեպքում տեղեկատվությունը համադրվում է ծառայության տնօրինության տակ գտնվող տվյալների հետ: Ընդ որում, անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում՝ 1) հիմք է ընդունվում (շտեմարան է մուտքագրվում) դիմումի և կից փաստաթղթերի հիման վրա ներկայացված տեղեկատվությունը. 2) ծառայությունը, տեղեկատվության հավաստիության համար պատասխանատու պետական կառավարման մարմնի հետ համատեղ, փոխհամաձայնեցված կարգով, միջոցներ է ձեռնարկում անճշտությունները (անհամապատասխանությունները) շտկելու ուղղությամբ: Պատասխանատու պետական կառավարման մարմինների հետ փոխհամաձանեցված կարգեր առկա չեն:		Ն որոշումն ինքնին արդեն իսկ ընթացակարգ է, քանի որ դրանով կարգավորված են պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ կենսաթոշակի էլեկտրոնային գործ կազմելու, կենսաթոշակ նշանակելուց հետո ստացված՝ կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառելու, շտեմարանում ներառված՝ կենսաթոշակառուներին վերաբերող տվյալների հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ վերականգնելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու կամ վերսկսելու ընթացակարգերը: Բացի այդ, պետք է նշել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի ««Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշումը, որով հստակ և հաջորդական կարգով սահմանված են կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու) կամ կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու և վերսկսելու դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում գրանցելու կանոնները (ընթացակարգը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա ընթացակարգն արդեն իսկ կարգավորված է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն և 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշումների շրջանակներում, ուստի Ծառայության կողմից ներքին իրավական ակտով առանձին ընթացակարգ չի սահմանվել և տվյալ պահին բացակայում է այն սահմանելու անհրաժեշությունը: ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման 12-րդ կետի 2-րդ ենթակետում նշված է, որ դիմումի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվելու դեպքում տեղեկատվությունը համադրվում է ծառայության տնօրինության տակ գտնվող (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման և այլ մարմիններից

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
			ինքնաշխատ եղանակով ստացված) տվյալների հետ: Ընդ որում, անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում՝ Ծառայությունը, տեղեկատվության հավաստիության համար պատասխանատու պետական կառավարման մարմնի հետ համատեղ, փոխհամաձայնեցված կարգով, միջոցներ է ձեռնարկում անճշտությունները (անհամապատասխանությունները) շտկելու ուղղությամբ: Ծառայությունը սույն կետում նշված հարցերը կանոնակարգելու նպատակով սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնին՝ Նախարարությանը՝ սահմանված կարգով շրջանառելու նպատակով ներկայացրել է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1081-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Նախարարությունը 11.06.2024թ. N ԴԽ/ԱԳ-1-3/18876-2024 գրությամբ տեղեկացրել է, որ Ծառայության կողմից ներկայացված նախագծերով նախատեսվող կարգավորումները կքննարկվեն առաջիկայում նախարարության կողմից նախաձեռնվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:
5	Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Լիազորված պետական մարմին ճանաչելու, սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» թիվ 284-ն որոշմամբ սահմանված «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրի» հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝ լիազոր մարմնի՝ սույն պայմանագրի N 3 ձևով սահմանված տեղեկատվությունը պարունակող կարգադրության (պահանջի) հիման վրա, այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ,	Ընթացքում է	Խնդրո առարկա հարցը վերաբերում է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման հավելվածով հաստատված սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված բանկի պարտականությանը, որի վերաբերյալ ըստ Եզրակացությամբ արձանագրվածի՝ Ծառայությունը չունի որևէ գործիքակազմ բանկի պատասխանատվության ժամանակահատվածում՝ լիազոր մարմնից նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում և դրանից հետո հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից գումարների դուրս գրվելը հսկելու համար:

հ/հ	Անհամապատասխանություն / խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Հիմնավորումներ
	դրանում նշված գումարի չափով, առանց շահառուի համաձայնության, նրա բանկային հաշվից հետ գանձել միջոցները (բավարար միջոցներ չլինելու դեպքում՝ բանկային հաշվում առկա հասանելի մնացորդի չափով) և ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ միաժամանակ ապահովելով սույն պայմանագրի N 4 ձևով սահմանված տեղեկատվությունը լիազոր մարմին ներկայացնելը: Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային հաշիվ մուտքագրված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված այն գումարների համար, որոնք հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից դուրս են գրվել (ելքագրվել են)՝ մինչև լիազոր մարմնից սույն ենթակետում նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը. Ծառայությունը չունի որևէ գործիքակազմ բանկի պատասխանատվության ժամանակահատվածում՝ լիազոր մարմնից սույն ենթակետում նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում և դրանից հետո հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից գումարների դուրսգրվելը հսկելու համար:		Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի հետ կնքվող սոցիալական ապահովության հաշվի (պարբերական դրամական վճարների մասին) պայմանագրի օրինակելի ձևը հաստատված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-ն որոշմամբ, ուստի խնդրո առարկա հարց է դառնում Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և առաջարկության հաշվառմամբ սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության և/կամ նպատակահարմարության հարցը, որը գտնվում է սոցիալական ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի իրավասությունների տիրույթում: Ուստի Ծառայությունը դիմել է Նախարարությանը՝ Հաշվեքննիչ պալատի նշված դիտարկման և Եզրակացության 8-րդ բաժնի («Առաջարկություններ») 2-րդ և 4-րդ կետերով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով: Նախարարության կողմից ստացված դիրքորոշման հիման վրա Ծառայության կողմից, անհրաժեշտության դեպքում, կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությանը.

- Հաշվեքննիչ պալատի կողմից բարձրացված ռիսկերը գնահատելու և դրանցով պայմանավորված՝ կենսաթոշակի ավել վճարման դեպքերը բացառելու նպատակով.
    - առանձնացնել առավել ռիսկային ժամանակահատվածներին (ԽՍՀՄ, 1992-2013թթ.) վերաբերելի՝ շտեմարանում առկա աշխատանքային կենսաթոշակների տվյալները,
    - առաջնորդվելով էականության սկզբունքով՝ կիրառել տվյալների վերլուծության գործիքակազմ և առանձնացնել այն կազմակերպությունները (ապահովադիրներ), որտեղ վերը նշված ժամանակահատվածներում աշխատել են առավել մեծ թվով կենսաթոշակառուներ,
    - առանձնացված կազմակերպություններից ստացված տվյալների և փաստաթղթերի հավաստիությունը պարզելու նպատակով իրականացնել համադրումներ և անհատական ուսումնասիրություններ՝ սահմանելով կատարման ժամանակացույց:
- Հաշվի առնելով 2023 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությամբ արձանագրված խնդիրների մի մասի լուծված չլինելու հանգամանքը, ձեռնարկել միջոցներ՝ հաշվեքննությամբ ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով:
- Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Հակոբ Միհրանյան
Հաշվեքննիչ պալատի անդամ

Digitally signed by
MIHRANYAN HAKOB 1108660142
Date: 2024-11-08 16:19:41

31 Հոկտեմբերի 2024 թվական

Հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն